

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Պաշտոնի /զբաղմունքի/ անվանումը	Դերասան
I. Դերը՝	Մասնակցում է երաժշտական, տիկնիկային, էստրադային հեռուստա և ռադիո ներկայացումների, խաղարկային և վավերագրական ֆիլմերի, ռադիո և հեռուստատեսային սերիալների, գովազդային և երաժշտական հոլովակների, զանգվածային հանդիսությունների: Հանդես է գալիս՝ որպես համերգավար և հանդիսավար:
II. Խնդիրների բնագավառները	
Խնդիրների բնագավառ 1. Նախագծի նախապատրաստական աշխատանքներ	
Աշխատանքային գործընթացը	<ul style="list-style-type: none"> - Նյութի (տեքստի) իմացություն: - Կերպարի հոգեբանական, հոգեֆիզիկական, խոսքային, պլաստիկ առանձնահատկությունների ըմբռնում - Ժանրի զգացողություն՝ (կոմեդիա, դրամա, տրագիկոմեդիա) -Նախագծի սյուժետային ամբողջականության ընկալում: - Երաժշտական պլաստիկայի և մարմնամարզական հնարքների տիրապետում - Շպարի և զգեստավորման կանոնների իմացություն
Կատարման չափանիշներ	Նախապատրաստական աշխատանքները կատարված են համաձայն նախագծի և բեմադրող ռեժիսորի կողմից ներկայացված պահանջների:
Խնդիրների բնագավառ 2. Նախագծի իրականացում	
Աշխատանքային գործընթացը	<ul style="list-style-type: none"> – Նյութի (տեքստի) յուրացում: - Բեմական, գեղարվեստական կամ պաշտոնական խոսքի բաղադրիչների, տեխնիկայի, տրամաբանական ընթերցանության կանոնների տիրապետում - Կերպարի պլաստիկայի, ամբողջականության, ներքին և արտաքին շարժառիթների, զգացողությունների այժմեականության մատուցում՝ խմբային և անհատական փորձերի միջոցով: - Տեսագրության, ներկայացման կամ ֆիլմի, առանձին դրվագների կամ բեմադրված փոքր էտյուդների ժամանակ միզանսցենի, բեմական տարածքի, դահլիճի զգացողություն: -Տեսախցիկի առջև աշխատելու և խոսափողի գործածության հմտություններ: -Համագործակցային հմտությունների, իմպրովիզացիայի տիրապետում և ռեժիսորի ներկայացրած խնդիրների ստեղծագործաբար կատարում:
Կատարման չափանիշներ	Ապահովված է համապատասխան աշխատանքային մթնոլորտ և փորձերի բնականոն ընթացք:

Խնդիրների բնագավառ 3. Նախագծի հանձնում	
Աշխատանքային գործընթացը	<ul style="list-style-type: none"> - Բեմական խոսքի և բեմական շարժման համադրում: - Դերի ամբողջականացում - Երաժշտական, տիկնիկային, էստրադային, հեռուստա և ռադիո ներկայացման, ինչպես նաև խաղարկային, վավերագրական ֆիլմի կամ ռադիո, հեռուստատեսային սերիալի, գովազդային կամ երաժշտական հոլովակների նկարահանում, - Հանդիսության կամ համերգի վարում:
Կատարման չափանիշներ	Ապահովված են նախագծի ավարտման և հանդիսատեսին հանձնելու աշխատանքները:
Խնդիրների բնագավառ 4. Շարունակական աշխատանքներ	
Աշխատանքային գործընթացը	<ul style="list-style-type: none"> - Ներկայացումներում և նախագծերում շարունակական մասնակցություն: - Հեռուստա-ռադիո սերիալներում և հաղորդաշարերում հաջորդ դերերի պատրաստում: - էստրադային համարների և նոր համերգային ծրագրերի հարմարեցում և նոր համարների ստեղծում: - Ֆիլմերի, տեսահոլովակների, գովազդային հոլովակների և նոր դերի պատրաստում և կատարում:
Կատարման չափանիշներ	Ապահովված են ներկայացումների, ֆիլմերի, հաղորդումների շարունակական աշխատանքներն ու ցուցադրությունները:
III. Պատասխանատվությունը	Պատասխանատու է իր դերի և կերպարի զգացողության իմացության, փորձերին, իսկ հետագայում նաև ներկայացումներին պարտաճանաչ, ֆիզիկապես և հոգեբանորեն պատրաստ ներկայանալու, մյուս դերակատարների հետ համագործակցության և աշխատանքային նորմալ պայմանների ու մթնոլորտի ապահովման, դերասանի աշխատանքին թիմային մոտեցում ցուցաբերելու հարցերում:
IV. Լեզուները	Մայրենի լեզու՝ գերազանց Առնվազն երկու օտար լեզու՝ ռուսերեն (պարտադիր), անգլերեն, ֆրասերեն, գերմաներեն (ըստ ուսանողի ցանկության)՝ լավ:
V. Համակարգիչը	Microsoft Word - լավ Internet Explorer – լավ
VI. Գիտելիքները	Գրականության, արվեստի, երաժշտության, պարի, շպարի, մարմնամարզության, հոգեբանության, իրավաբանական, պատմական գիտելիքների ընդհանուր մակարդակի իմացություն:
VII. Կարողությունները և հմտությունները	<ul style="list-style-type: none"> - Տիրապետում է բեմական շարժման և գեղարվեստական խոսքի տեխնիկային, դերի տեքստային և կերպարային առանձնահատկություններին, որոշակի մարմնամարզական հնարքների և մարմնի պլաստիկայի բաղադրիչներին, - Կարողանում է ինքնուրույն շարվել, - Տիրապետում է երաժշտության և ռիթմիկայի կանոններին, վոկալային հմտություններին - Տիրապետում է իմպրովիզացիայի հիմունքներին:
VIII. Վերաբերմունքը	Մտածող, պարկեշտ, անկաշկանդ, պարտաճանաչ, պատասխանատու, պահանջկոտ, կարգապահ, հաղորդակցվող, մաքրասեր, տեղեկացված, համեստ, հարգալից, նորարար, ընկերասեր: Մասնագիտական ոլորտում ինքնակատարելագործման միտում: Արվեստի նկատմամբ հետաքրքրության և սիրո ցուցաբերում:

